

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԻՐՈՒԱԳԾԵՐ

19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ 4.

Առաջին երեսնամեակ

Նոյն իսկ ԱՐՄԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ (1790—1866), Մխիթարեան-ներին այս համբաւեալ քերթողը, իւր ստուարահատոր տաղերով, կարելի է ասել՝ ոչ մի շարժում չի մտցնում մեր բանաստեղծութեան մէջ: Ես կրկին անգամ համբերութիւն ունեցայ սրա, ինչպէս և միւսներին տաղերը ծայրէ ծայր կարդալու, շատ տաղեր նոյն իսկ կրկին ու կրկին անգամ, և ցաւում եմ, որ չգտայ արժանի այն գովեստին, որ տալիս են նրան իրենք վենետիկեցիք առաջ և այժմ՝ համարելով նրան մեծ բանաստեղծ, «ատաիկեցի և լատին քերթողաց արժանաւոր անձն՝ իր լեզուովն, մտքովն ու սրտով», այնպէս որ «ոչ լիկ ազգային՝ այլ նոր ժամանակաց ընդհանուր մտանագրութեան ասպարիզին մէջ ալ, իրաւամբք և պատուով նշանաւոր տեղ մը կրնայ գրաւել»:— Արփայլի քերթողական և իսկաշնորհ հանճար, վառվռուն միտք և բացատրութիւն, զարդարուն գեղեցիկ լեզու մը: Անկարելի է կարդալ եղերք սոխակին, Գանգատ Պառնասայ և Դատաստան Ապոզոնի, Յաղթանակ արդարոց, Դաշտիկն յաւար, ու անոնց նման տաղերը և չխոստովանիլ թէ ասոնք արտագրողը սովորականէ գուրս հանճար մըն է ու նախնի քերթուածաց աշխուժիւն ու եռանդով կրթուած միտք»:

Բայց զժբախտաբար այսպէս չէ: Արդարեւ Բագրատունին անխոնջ պարապող մարդ է եղել. լաւ իմօրել է մեր գրաբարը և հին ու նոր օտար լեզուներ. շատ կարդացել է Աստուածաշունչ, ինչպէս և Հոմերոս և ուրիշ գիւցաղներգութիւններ, մեր հին մտանագրութիւնը. ուսումնասիրել է օտար բանաստեղծութիւններ, որոնցից և թարգմանել է բաւական բան. նա արտագրել և ինքնուրոյն շատ բան, — բայց այս ամենով հանգերձ նա մեր գրականութեան համար ծառայել է ոչ իւր ինքնուրոյն բանաստեղծութեամբ: Նա է՛ և կրմնայ իբրև թարգ-

1) Տես. Աբարատ 1908 թ. դեկտ.

մանիչ, հայկաբան, քերականութիւն գրող: Իսկ իբրև բանաստեղծ ոչ միայն արժանի չէ այն գոլեստին, որ տալիս են նրան. այլ և չի կարող իւր ժամանակի առաջնակարգ հայ բանաստեղծներէ շարքը դասուել: Նա առաջին տեղն է բռնում միայն Մխիթարեան այս առաջին քերթողներէ մէջ, բայց և իւր էութեամբ շատ էլ բարձր չէ նրանցից:

Նրա սաղերը, հրատարակուած 1852 թուին, կազմում են մի մեծադիր ստուար հատոր և բաժանուած են մի քանի մասերի՝ «տերունականը», «կրօնականը», «բարոյականը», «կենցաղականը», «սթափականը» և ապա «թարգմանութիւնը»: Ինչ է այս սաղերի նիւթը. ինչնով է հետաքրքրուած և սղեսորուած Բագրատունին ինչ նորանոր գաղափարներ է արծարծում նա իւր երգերի մէջ:

Նրա «տերունական» սաղերը նուիրուած են Քրիստոսի ծննդին և մոգերի երկրպագութեանը: Նիւթն ուրեմն շատ հին է և մեր շատ բանաստեղծներից յաճախ երգուած: Բագրատունին ևս իւր երկասարգ հասակում, երևի նոր կրօնաւոր դարձած, 1811—1814 թուականներին իւր հարկն է վճարում այդ հին նիւթին: Առաջին տողն՝ «ի ծնունդ Տեառն», որ գրուած է 18-րդ դարու խաւալացի նշանաւոր բանաստեղծ Մետաստազիոյի (1698—1782) նմանողութեամբ, իսկապէս մի գեղեցիկ քերթուած է շնորհալի ու փափուկ անուշութեամբ, կենդանի ու հարուստ երևակայութեամբ, թէպէտ և սովորական գաղափարներով. այն է մանուկ Փրկիչը գարնանային մի առաւօտ է ծագում մարդկանց համար, մի ճշմարիտ սոկեղէն դար բանում, գթութիւն ու սէր, հաւասարութիւն ու խաղաղութիւն բերելով աշխարհ: Եթէ Բագրատունին բաւականացած լինէր միայն այս քերթուածով, շատ էլ չէինք ցաւել. բայց նրա գրիչը բեղմնաւոր է, և հենց սկզբից հակուած է դէպի վիպականութիւնը. ուստի և նրա կրօնական զգացումին չէր կարող գոհացում տալ միայն «քսա Մետաստասեայ» քնարեղութիւնը: Պէտք էր նորից մի քանի անգամ նոյն բանն երգել մեծամեծ քերթուածներով, երկար, վիպական տողերով, առանց սակայն մի որ և է խորութիւն մտցնելու նիւթի մէջ. այլ ընդհակառակն ծանծաղացնելով այն, և ոչ միայն մտքերի, այլ և խօսքերի և նոյն խոհ հատուածների կրկնութիւններ տնելով: Այսպէս, օրինակ, ամբողջ ասանութ տող 1812 թ. գրած մի քերթածից, առանց այլևայլութեան, բառացի առնում զնում է 1813 թուին գրած մի ուրիշ քերթուածի մէջ:

Բագրատունին իւր այս հասակում արդէն երևում է տարուած է հեթանոսական գիւցազներգութեան: Բայց ինչ ա-

ւելի անդէր և անպատեճ՝ քան Փրկչի խնարհ ծնունդը վիպել հեթանոսաբար և Փրկտառին անուանել «վհաղուն ծնունդ անմահին Ալիմպեան» (եր․ 29), և համ «Միրանեփառ» Հայր Աստուծուն գնել Ալիմպոսի կատարին, ինչպէս համերական Չևս, քարծր գահի վրայ։ Այսպէս, ծնունդ է մանուկ Յիսուսը անշուք այրում։ Հաւատքը անձնաւորել իրբւ մը լուսապղենտ, պատաւած կոյս, ներկայ է նրա ծննդեանը, բայց երկբայում է թէ նորածին մանուկը լինի նա՛, որին շորս հազար տարուց ի վեր սպասում է ինքը։ Այդ ժամանակ նա

Կոչէ ի սրբաէն գարաօսը զթառաշ զաղերս մաղթանաց։
 Եւ յոգևոց ելեալ անէր տա նոսա զլիմօք սրգազգեաց։

Բաւական չէ, որ Հաւատքը, վերացական գաղափարն անձնաւորեալ է, նրա արտասուքն ու մաղթանքներն ևս, ըստ հին մեկնաբանների, անձնաւորեալ են այնտեղ․ և Հաւատքը պատուիրում է գրանց գնալ Կարծրեալի մօտ և հարցնել թէ արդեօք մտնում ծնուածը նա՞ է, որ պիտի գայ։ Եւ ահա այդ արտասուքն ու մաղթանքները սեւազգեառ խմբով, թիւերը քոյց են անում, գլխակոյր, աչքերը խնարհած հասնում են Ալիմպոս, պատում են Միրանեփառի քարծր գահը, լաց ու կոծով փարում են նրա ծնկներին և ասում նրան ինչ որ պատուիրել էր Հաւատքը։

Մտնարհեաց քարծրեալն ի վերին գահուն զուսկն իւր անմոլար Անթըպիտ զլիմօք զաղերսըն լսել, սակայն հեղաբար։

Առ ապա ի վեր ըզգլուլս իւր ահեղ և զուլան կամար, Ի շարժել յօնից սասանեալ դողաց Ալիմպեայ կատար։

Եւ ո՞ հանդարտէր ի լուր պատգամաց լեզուին ազգարար։
 Հայեցաւ յերկիր, ձայն ետ սրտաման ի սոյն յայտ օրպար։

Ճիշտ ինչպէս ամպրոպային Չևսը Ալիմպոսի գլխին։ Նա Հաւատքի գնապաններին բացատրում է թէ նորածինն իւր սրգին է և ապա կանչելով հրեշտակներին բանակը՝ հրամայում է, որ գնան պաշտեն իւր ուղուսն։

Եւ քնդ քարբառոյն որոտաց երկին շանթից ի փայլակ,
 Հոգւոց անմահից ծածանեալ յերեք սօսաիրիւն բանակ,
 Եւ երկրպագեալ տէրունեան ոտից գընան յանդատտակ,
 Մարմին յօդաւոր ՚իւթեալ յեթերէ արկանեն գիմակ,
 Գլուլս սոկեվարս լուսաթև թըռչին արի պատանեակք։

Հրեշտակներն իմաց են տալիս և հովիւներին, որոնք նոյնպէս գալիս են երկրպագելու նորածին արքային։

Այս մի և նոյն նիւթը, ինչպէս և մոզերի երկրպագութեան մասին քերթուածը՝ «ի յայանուրիւն Տեսուն» նա վերածած

ունի նաև բեմական ձևի, քաժանուած չորս փոքրիկ արարուածները, երևի Մխիթարեանների աշակերտական թատրոնում խաղալու համար Գրանք առաջին հայ օրատորիոններն են, կրօնական թատրերգութիւններ, որոնց ներկայացման համար առանձին բեմական յարմարութիւն չի պահանջուում: Բազրատունին այստեղ էլ ներշնչուած է անշուշտ Մետաստազիոցից, որը նոյնպէս ունի բաւական թուով օրատորիոններ: Գործողութիւնը է հարկէ շատ պարզ է, չկայ դրամատիկական զարգացում և ոչ բնաւօրութիւնների սուսումնասիրութիւն. դրանց, ինչպէս պէտք էր, փոխանակուում է կրօնական-բարոյական այլաբանութիւնը, որով երեք մոգերի տեղ հանդէս են գալիս անձնաւորեալ Հաւասք, Յոյս և Սէր, և ապա իշխում է աստուածային հրաշալիքն ու սքանչացումն այդ հրաշալիքի վրայ: Բայց դրժբախտաբար սառն է հնչում Բազրատունու քնարերգութիւնը, և մանաւանդ միջի երգերը չունին այն ցնծազին խանդավառ յափշտակութիւնը, որ անհրաժեշտ է:

Ինչպէս էլ լինի, Բազրատունին իւր այս կրօնական դրամաներով մի մեծ նորութիւն է մտցնում մեր գրականութեան մէջ, մի բոլորովին նոր տեսակ, որ մինչ այդ գոյութիւն չի ունեցել մեզում: Արդարև, ինչպէս տեսանք, Ջախջախեանի և Թոմասեանի սասնաւորների մէջ յիշուում են 1789, 1802 և 1804 թուերի համար Մխիթարեանց թատր», կամ «Թատերական ողբերգութիւն», բայց Բազրատունու այս օրատորիոնները, գրուած 1812 և 1813 թուերին, ինձ ծանօթ հնագոյն գրուածքներն են իրենց դրամատիկական ձևով, թէպէտև քառասուն տարի յետոյ միայն հրատարակուած, ուստի և ոչ մի ազդեցութիւն չթողած մեր գրականութեան վրայ:

Բազրատունու «Կրօնական» տաղերը պէտք է հասկանալ կրօնաւորների և կրօնաւորութեան վերաբերեալ: Գրանք նուիրուած են նորընծայ կրօնաւորեալներին, այս կամ այն ձեռնագրութեանը, սրա կամ նրա սքեմ ընդունելուն, նորընծայ բարեկամների առաջին պատարագին, Մխիթարեան Աթոռակալի բնարութեանը, օժիմանը և ին,—բոլորն էլ ըստ աուր պատշաճի յօրինուած ոտանաւորներ, Մխիթարեան ընտանիքի մէջ տեղի ունեցող դէպքերին հանդիսաւորութիւն տալու համար: Տաղերիս նիւթից հենց կարելի է դուշակել թէ ինչպիսի գաղափար պիտի արծարծուի դրանց մէջ: Դա հոգու և մարմնի, երկնքի և երկրի միջնադարեան կռիւն է: Պէտք է կտուել աշխարհի բռնակալ սիրոյ դէմ, որ մարդու հոգին շղթայակապ՝ քշում է դէպի խաւար անդունդը. պէտք է յաղթել այդ կորստաբեր սէրին և ամաչեցնել սատանային, որ մարդու թշնամին է: Աւ

այդ նորընծայ կրօնաւորողները, նորագուելով անունով ու գործով, իբր քաջ զինուորներ մարանչում են չար թշնամի հրեղէն սպառազէնների դէմ. և այդ նրանք կարողանում են անել, որովհետև կատարելով ամենամեծ գործը, այսինքն իրենք իրենց ինքնակամ նուիրելով Աստուծուն իբրև զօհ, դառնում են հրեղէն հրեշտակներ, և սարգենի պոսակներով սլանում են դէպի երկինք, մանում իրկչի տունը, երկնային կամարը, ուր յաւիտեան պիտի ապրեն: Կրօնաւորը նման է իլիւնիկի, որ ինքն իրեն ողջակիզելով՝ հրաշալի կերպով կրկին նորոգւում է յաւիտենական կեանքի համար:

Այս է անձ այդ կրօնական տաղերի նիւթը, որ անհրաժեշտօրէն շարունակ յեղյեղում է քերթողը, քանի որ բոլորը միանման դէպքերից առթուած բաներ են: Դա մի շատ հին նիւթ է, որ շատ աւելի զեղեցիկ կերպով երգել է Կոմիտաս կաթուղիկոսը՝ Նախնի մեանց մի Անձինքի մէջ, որի խորութիւնն էլ չունին Բագրատունու այս տաղերը: Նախնի մեանք իրենց նուիրելով Քրիստոսի սիրուն՝ դառնում են Հայաստանի իրկութեան պատճառ. բայց և մեր բանաստեղծն անկեղծ սրտով ուրախանում է իւր նորընծաների ձեռնադրութիւնների համար, ուրախանում է նրա կարծիքով և հարսն անարատ Հայաստան» որովհետև

Արդէն սարսեն սանդարամետք ի խաւար,
 Եխած զմատն արիւն ակամբ Բելիար,
 Զի յաջորդէ Յեսու զՄովսէս յամս յամայր
 Քակել զամուրս, թափել ժանիւն ընդ աւար:

Աթոռակալին նուիրուած քերթուածների մէջ մեր քերթողը մեծ թեթևութեամբ չափազանցութեան մէջ է ընկնում, ու ժգին տողերով գովելով նրան իբրև Աստուծու ընտրածի, և զուտ մխիթարեան տեղական դէպքը խոշորացնելով իբրև մի համազգային բան.

Զարթիր զարթիր, տուն Սիսակայ, զարթո՛ւ և պար նուագածու.
 Հայրենի մեր աշխարհին սուրբ թագաւոր օծաւ իշխան,
 Առէք տաւիլ կընդընդոց փող և բամբիւռն Գողթան,
 Գողթան շքունդն յարուսցէ զբլուրս և զանտառ
 Յաղթող երգոց ձայնիւ գոչել մըրցական
 Բզխոնարհ միտս իմաստնոյն՝ ըզսիրտն ի տէր սիրոյն ի վառ:

Այդ նոր առաջնորդը, «թագաւորը», որ յաւելեալ կոչում ունի «Իրապետ Սիւնեաց», է մի արեգակ, որին երգում է տիեզերքը, որովհետև նա ձմեռուայ կապանքը քանդում է և ինչ:

Ո՞ր է սա նոր արքայ եկեալ ի Սիւնիս,

Անձաւք լերանցըն Սիսակայ հարցանեն:

Քնտրեալն է դա եթերին նորապըսակ տէր երկրիս,
 Գայ ի պարտէզ քս սիրելի շունչ հարառոյ ի հիւսիս:
 Հոյլ վարդից և շուշանայ և համասպրամ յիւր նըկարէն
 Փըթթեանդ ստիւք տէրունեան գարշապարաց լուսեղէն:

Ահա թէ ինչպէս բարձրացնել դիտէ Բագրատունու Մու-

սան իւր մեծաւորին: Եւ ինչի՞ համար, որովհետև

Յաւուրց Մուշեայ պահատեցին հարք սրբոց,

Պահատեցին ի տուն Հայկայ պետք հարանց,

Մինչև յարեաւ Մըխիթար, մինչև յարեաւ դէտն Ադոնց,

Որ արդ յերկնից պատշգամէն յառեայ ի մեր յոյ՛ լալօնս,

Զի՞ յամէ մեզ, ասէին, տթոռակայ ժառանգ մանկանց:

Եւ այժմ՝ այդ ուշացած աթոռակալն ընտրուած և օծ-

ւում է:

Մխիթարեանց այս սոսորու թիւնը, որ կարծեմ՝ Վ. Պուլից է ծագել, անցնում է յետ Վ. Պուլի վրայով Հայոց եկեղեցու մէջ և երկար ժամանակ, կարելի է ասել մինչև մի տասն ու հինգ տարի առաջ, Եջմիածնում ևս պարտք էին համարում գրաբար ճռճուն ստանաւոր ուղերձներով շնորհաւորել կաթողիկոսի գալուստը, օծումը, նոր տարին ևլն: Իրանք քնարերգութիւն չեն հարկաւ, այլ միայն մտածուած յանգեր ու ստրեր, որոնց մէջ սակաւաթիւ տողեր միայն ունին զգացմունքի շեշտ: Իրանց կատարելատիպը կարելի է համարել աճա՛ Բագրատունու այս քերթուածները, որոնց մէջ վրայուն արտաքին, զարդարուն լեզու, փարթամ առացուածներ՝ որքան ասեմ՝ կայքայց ի զուր կը լինի որոնել զգացմունքի ուժեղութիւն, եթէ չասեմ զգացմունք. իսկ իմաստ ու գաղափարի նկատմամբ դատարկութիւն է իշխում:

Նոյնպիսի չնչնութիւն են ներկայացնում գաղափարներով և «բարոյական» տաղերը: Աշխարհումս խաղաղ կեանք ասածը չկայ, այլ միայն ցաւ ու աղէտ, թախիծ ու տագնապ:

Գանձեալ կան քեզ աղէտք ցաւոց դարան,

Արաի մտաց երբերական

Բքայորգոր ձմեռն ալեաց խուժան

Փոթորկայոյց ծով դառնութեան:

Աշխարհս մի ծով է և մարդս նրա վրայ մի նաւ, որ ալիքներին ձեռին խաղալիք է դարձած, զիււշունչ հողմը առնում տանում է դէպի նաւաբեկութիւն, — մի հին գաղափար և նոյն իսկ նմանութիւն, որ սակայն Բագրատունին մանբամանութեան մէջ նորոգում է: Նոյնպիսի մի նորոգած ձեով երգում է նա վերջին դատաստանը, որ մեր հին ըանաստեղծների սիրած

առարկան է եղել, և որի ժամանակ երեսու՞ է որ վերջին յա-
ջողութիւնը ոչ թէ անօրէնն ունի, այլ արգարք:

Բազրատունու «կենցաղական» կոչած տաղերը, որոնք
թուով ամենկից շաան են և լի գովենաի արժանացած, նիւթով
շատ աւելի բարձր չեն: Կրանք մասամբ ուղղուած են իւր
ընկերներն. մէկի մէջ իւր սէրն է յայտնում, միւսի մէջ
իւր շնորհակալութիւնը ստացած պարգևի համար. կամ թէ
լացով ճանապարհ դնում իւր ընկերին՝ մի չարքորի մէջ գան-
դատում, որ իւր սրաի հասար ընկերն իրեն նամակ չի գրում:
Կան և կաղանդի շնորհաւորութիւններ իրենց հոգեւոր ակրոջը
կամ «Առ կարգակիցն ճանապարհորդ ի շնչկիս օգտախնդիր
ազգիս», իսկ թէ ինչ է այդ օգուտը՝ չի իմացուում. այդ կար-
գակիցն արիութեամբ ծովեր է անցնում, սրտում ունենալով
ազգի սէրը.

Հայի կառուցող հայրենեաց

Ջքեզ սրգի գաւանեաց.

Պարթնն արթուն և ցանկալին քո Սահակ,

Մխիթարայ զօրավարք՝ քեզ հարկանեն փազոց հըռչակ

Տես արդէն, տես ի արխուր գէմն հայրենեաց

Քաղցր շողեալ ըզժըպիս սրգեցորով քո գըզուանայ:

Կան և ուղերձներ նուիրուած Աղեքսանդր Ատիայէլ Ղա-
րամանին նրա գալուստը կամ ծնունդը շնորհաւորելու հա-
մար, որովհետե նա գպրոց է բացել: Մի բերթուած Ռուսաց
Աղեքսանդր Բ. կայսեր այցելութեան առթիւ. ուրիշները Լեւոն
ԺԲ. պապի Աբրահեան գպրոցի սաների հետ ճաշկերոյթի առ-
թիւ, ևն: Ե. վերջապէս բանայանգ խաղեր Ջախջախեանի հետ,
և ահագին թուով ստանաւորներ նուիրուած Տիւղեան ընտա-
նիքի որ և է գուտ ընտանեկան դէպքի, ինչպէս ծնում է մի
երեխայ, պէտք է ստանաւոր գրել. մեանում է մէկը՝ դար-
ձեալ ստանաւոր է հարկաւոր. հիւանդութիւնից առսղջանում է
մի ուրիշը՝ ինչպէս կարելի է ստանաւորով խնդակցութիւն
չյայտնել. հասպ երբ հարսանիք է լինում, ի հարկէ պէտք է
հարսին գովել. . Բազրատունին այդ բազմաթիւ տաղերի մէջ
դառնում է Տիւղեանների տանու բերթոյը, որ իւր՝ նրանցից
վայելած բարիքների համար գրաբար յանդերով ու ստքերով
վարձահատոյց է լինում: Կրանք գրչի վարժութիւններ են միայն
երբեմն ձիգ ու երկար տողերով, և սահմանուած են միայն
մասնաւոր մարդկանց սրտերը շոյելու համար:

Նրա կենցաղական տաղերի մէջ շատ գովում են «Կաշ-
տիկն յաւար, եղերք մշակի», որ մի ութվանկանի զուգայանգ
ստանարոր է մեծապէք և չափի պատճառով հենց աշխոյժ

եռանդով է ընթանում: Բովանդակութիւնը մի շատ հասարակ բան է: Երկտասարդ որդին ծերունի հօր հետ, բախտից հալածուած, գալիս ընակում են ընտթեամբ հարուստ մի ամայի գաշտում. մշակում են. հինգերորդ տարուայ վերջը մշակութիւնը տալիս է իւր արդիւնաւէտ պտուղը: Այդ ժամանակ հայրը մեռնում է, և որդին մէն մենակ է մնում ու ստում է.

Այն ինչ արդարն յինէն գնաց,
Վեհն յեթերէ զմեզս իմ յեշեաց.
Յիւրմէ գընդէն ետ ասպատակ
Առնուլ վրէժ արագ արագ:

Իսկ թէ ինչ է արել որդին, ի՞նչ մեղք է գործել նա, որի համար Աստուած վրէժ է առնում, յայտնի չէ այդ: Անշուշտ մի մեղք գործել է, որ ասպատակաւորները երեք կողմից վրայ են տալիս, աւերում են արտ ու այգին, տիրում երկրին և իրեն մշակին էլ «հանեայ դանիւ ու ի քարշ ընդ երիզուտ վարեն զիս դարշ»: Եւ նա այնուհետև մի մխիթարութիւն ունի, — յեշելով իւր անցեալ աշխատանքը ողբալ:

Նախաբանն այնպէս է, որ մարդ սպասում է մի գառնագին զօրեղ ողբի, մը զգացմունքների բուռն զեղման.

Մեղպոմենէ, հար ինձ քընար
Երդել ձայնիւ ողբերգաբար
Լացցեն նուազ լերանց փապարբ,
Մըռընչեսցեն ձորք և անտառք.
Երեսք մարգաց հարցեն դալուկ,
Արտօսր հեղցեն սողեալ առուք.
Յաւէրժահարսանց պար գեղեցիկ
Ձեռն ի ծնօտի նըրացին լըռիկ.
Ձի մեր դաշտիկն յաւար եղև,
Յոյս վաստակոցս ել ի գերև:

Բայց այդ նիւթն աւելի վիպական — նկարագրական է քան քնարական: Բնութեան նկարագրները շատ ընդհանուր են և ամեն տեղի. մշակութեան և աւերմունքի նկարագիրը նոյն իսկ համաշախ չէ տարուած, և վերջը բանաստեղծի թափը թուլանում է և սաշն է հնչում այն մասը, երբ հեծեծագին ողբը պիտի լինէր: Գուցէ կարելի է այլաբանութիւն համարել այս քերթուածը և Հայաստանի պատկերը տեսնել մէջը, բայց այդ կը լինհր ձգձգուած բացատրութիւն:

Նիւթով շատ աւելի ստոր բան է և միւս գովուած քերթուածը «ի մահ սոխակին եղերք հովուի», որի գեղեցիկ մասը հենց սկիզբն է.

Աչք գեղեցիկ ցօղազին

Լացէք զմահ սոխակին:

Վայ և եղուկ ինձ հիքիս,

Սուգ և ի յիմ սիրելիս:

Ձամենեսին մի խաւար

Դընէ յարտօսը անդազար:

Մի՛ զիս, մի՛ զիս ըսիտիէք

Մի՛ զիւր սըրտիդ տայք երբէք:

Ձի սէր սոխակն իմ լըռեաց

Սան իմ սիրուն երգասաց,

Ձի սէր հաւելին իմ մեռաւ

Սան իմ սիցուն անպարսաւ:

Նըզով ի սե օրն և ժամ

Յոր զիւր տարմին լիք երամ,

Օրն և տեղին սե նըզով՝

Ուր տեսի զնա մօտ երգով:

Եւ այս բոլորն ինչնէ համար: Մի Արձէշցի հովիւ մի անգամ սրինք է փչում: Լսում է մի սոխակ նրա նուագը մօտենում է և ինքն էլ երգում է: Հովուի խնդրի վրայ այդ սոխակը նախ նստում է նրա ուսին, և ապա

Անդուստ ածեալ ըզթեերն

Ի ծայր սըրնգիս դայր նըստէր:

Ելեալ և իմ մեղմաքայլ,

Երգ փոխելով այլ և այլ

Եկի ու ի տուն իմ մըտի:

Հովուի կինը սրնգի ծայրից ընդսենում է սոխակին, փայփայելով զնում վանդակում, ուր երգելով նա զուարճացնում է հովուին և իւր ընտանիքին:

Սահայն ի սեաւ մանգաղէ

Ժպիւրհ մահուն ո՞վ ապրէ:

Մի ամառ այդ սոխակը սատկում է և կարծես աշխարհը կործանւում է. կարծես այդ սոխակից էր կախուած ոչ միայն հովուի, այլ և աշխարհի բախար: Եւ սղբում է ու սղբում հովիւը ու չի մխիթարում:

Ո՛հ, մի՛ ստիպէք երկարել,

Սիրտ ոչ բերէ զբանիս թել...

Ոչ բըժըշկի սըրտիս խոց...

Եւ այսպէս մօտ երկու հարիւր տողանի մի ահագին քերթուած, որի մէջ այլաբանութիւն էլ կարելի չէ լինում տեսնել, ուստի և ծաղրահան մի բան է դառնում իւր մեծավաճելու լըջութեամբ: Մաղրիլի է դառնում մանաւանդ և նրա-

նով, որ Արձէշցի հովուի բերանից լուսւմ ենք՝ Ամինդաս, Անակ-
բէօն, Տիբուլ, Որիէսս, Ոսիան, Բարդ, Պետմեթեա, Առիւծ լի-
բեան, Հիմալայք և ին. և ին: Եթէ կլասիկական կեանքից առած
ստանաւորներն մէջ, ինչպէս «ի մահն կեանքու», կարգոււմ ենք
ժողովուրդ արիսեան, դիք և կամ դից անուններ, այդ հասկա-
նալի է, որովհետեւ նիւթն է պահանջոււմ այդ: Բայց երբ մի
Արձէշցի հովիւ է այգպիտի անուններ արտասանոււմ և կամ
նոյն ինքը Բագրատունին միեթարեան մի վարդապետ, այդ
արդէն տաղահալի է:

Եւ Բագրատունու ամենամեծ ծառայութիւնը մեր գրա-
կանութեան համար՝ այն է որ նա այդ կեղծիքը, կեղծ դասա-
կան ուղղութիւնը մտցրել է մեր բանաստեղծութեան մէջ:
Կրթուած լինելով կլասիկական գրականութեան վրայ, նա կար-
ծոււմ է թէ աստուածները կամ դից տառապելները որ յիշոււմ
են հին բանաստեղծները, մի բանաստեղծական պահուստներ են
միայն և այդ պահուստները կարելի է և հայկեանքի քերթուած-
ներն մէջ գործածել: Նրա համար գրեթէ չկայ Աստուած, այլ
աստուածք, դիք, անմահք: Եւ այդ անմահները մի քանի քեր-
թուածներն մէջ վխտոււմ են՝ Մուսայ, Մելիսսենէ, Պուլիսիա,
Մենմոսինէ, Պիգաս, Արամազդ, Ապոլոն, Պիմպլոյք, Փայթոնք,
Փեբոս, Սքէս, Պսիդոն և ին. և ին. նոյնպէս Հելիսիս, Պինդոս,
Պսոնաս և ին. և ին. դրանց հետ բազմաթիւ տիկնորհութիւններ
հին կլասիկական առասպելներն: Ընթերցողն անպայման պէտք
է ձեռք տակ ունենայ մի յատուկ անունների բառարան, ապա
թէ ոչ՝ բան չի հասկանալ Բագրատունու լուսագոյն համա-
լուսած քերթուածներից: Որովհետեւ որինակ ինչ կը համկանայ
մարդ անանց բառարանի հետեւալ երկաստղից՝

Եեղ ախանեան հարսն սիրած

Պարզէ զգլխով վրան ներկած:

Բառարանը միայն մեզ տեղեկացնոււմ է, որ Տիթոն եղել է
Տրոյացի իշխան, Պրիամոս թագաւորի եղբայրը, որին իր գե-
ղեցկութեան պատճառով սիրում է Արշալոյսը, Աւրորան, և ան-
մահացնոււմ նրան: «Տիտանեան սիրած հարսն» ուրեմն արշալոյսն
է, և փոխանակ պարզաբար ստ. լու. թէ «մեղ արշալոյսն զգլխով
պարզէ վրան ներկած» Բագրատունին վերի տողերն է կազ-
մում: Զտխմախեանն իւր լուսագոյն քերթուածի մէջ, «Մու-
սայն առ Արամեան քերթողն», գրոււմ է հետեւեալը.

Բառք անապակք՝ որպէս ուսոյց հու. ձեր թորգոմ,
Բայց ոչ մաւրք՝ մինչ լուցանել լուստեր և մամ.
Կամ ի Տարսն չուել պանդուխտ կամ ի Գրեին,
Մեւ երահարց՝ զինչ այն բառից ձեզ միտք թըւին:

Բագրատունու քերթուածները հասկանալու համար անս' հենց այդ միջոցներին պիտի դիմել: Այդ պատճառով թէպէս և քանի քանի անգամ կարդացի նրա գովուած «Առ զանգատ Պառնասեայ և Կատատան Ապոդանի» տաղը, որի մէջ քառասուն—յիսուկից աւելի դիցաբանական անուններ միայն կան,— բայց շատ քիչ բան հասկացայ: «Լապտեր և մոմ» էլ վառեցի, բայց դարձեալ գոհ չեղայ թէ ինքը կատարելապէս ըմբռնել եմ այդ քերթուածի միտքը: Այն, իմացայ որ Առանը, այսինքն բանաստեղծ Բագրատունին, իրեն երեւակայում է հովիւ Բիւրակնեան շէնքերում. իւր տաղաւարում ճաշում է զմայլելով բնութեան գեղեցկութեանը: Այդ ժամանակ յանկարծ վերեւից տեսնում է իջնում են

Կառքս կրկին երկածի քառահարկով անուագործ,
 Աւթոտանի երկվարք ի գիւ գոլով քաջափործ.

Այսինքն երկու, ստանաւորով գրած նամակներ է ստանում, որ և առիթ են լինում այս քերթուածը գրելու,—ասած է ծանօթութեան մէջ, թէ չէ ընթերցողն ինքը չէր հասկանալ: Եւ այդ գփուարանում եմ արել որոշ բան, բայց եթէ այն, որ հեղինակը մեծ տենչանք ունի մեծ բանաստեղծ դառնալու, սրաթե Պիզասի վրայ նստած՝ Պինդոս բարձրանալու և մեծ բանաստեղծների հետ անմահութեան մահով մեռնելու: Բայց «չիք սէր Կամենայց, ս'հ, յանտերունչ իմ գրոհիս. սա- կաւ բնատուր վեհ սգի՝ աստուածաստեղծ մեծութիւն», ասում է քերթողը: «Պարք Մուսայից հայկազանց լիախեան ի դոգ Ագրիոյ», այսինքն Վենեակի Մխիթարեան վանքը. բայց այդտեղ էլ նրանք բանաստեղծութեան համար պահանջուած յարմարութիւնը, հանգիստն ու պարապը չունին: Իսկ Հայաստանը հո՛ր բնու յարմարութիւն չունի բանաստեղծներո ծնեցնելու համար. բայց մի ժամանակ այդպէս չէ եղել, մեր բուն երկրում էլ մի ժամանակ մուսաները զուարճացել են:

Ինչքան այս քերթուածի մէջը մութ և դանդաղ է, այնքան վերջին մասը կենդանի է և գեղեցիկ, որովհետեւ խօսում է իրական կեանքը, սիրար: Բանաստեղծը մաքով սլանում է Հայաստան, բայց ինքն օտար աշխարհում է, որ նման չէ իւր երեւակայած եղեմական աշխարհին:

Ով դառն ողբոց յիշատակի, ով ցանկալի հայրենիք,
 Անդ էր երբեմն հեշտասուն քո Մուսայից ճեմելիք. . .
 Բիւրակն ի ծիր ծաղկազուարճ ըիւր խոխոջիւք բարեհամ
 Խայտայ ի քոյլքս հօանց, հազար երէ խուռներամ.
 Փըչէ հովուիկ նուրբ սըրինդ, հօաք ըզկընի իւր զըրզին,
 Նստի գողարիկ օրիորդ, կըթէ զըստինքս նոցին:

Հոյլ վրասակին կարկաջոտ, անդ Երասխայ քարավիժ
 եւ ծիածանն ի ցընցուղսն՝ հերբել սասախնն ըզվըրէ՞
 Երկինք ջերին կապուտակ՝ ամպք սոկեփայլ շուրջ ի խիտ,
 Շաղն ի ցողել շայեհանն ի ծոց երկրին մարդարիտ . . .
 Անդ է հոգւով իմ Մուսայն, սակայն մարմնով աստ պանդուխտ
 Ի խորշ նըստի Ազրիոյ յեղտիւր ծովուց ի քերցն ուխտա . . .

Քերթուածի այս գեղեցիկ վերջը, որ ես ամբողջ չբերեցի,
 որից կարծես ազդուում է Գամառ Քաթիպան իւր «Խմ սոխակին»
 երգը գրելիս, - գոնէ նմանութիւն կայ, - է և միակ հայրենասի-
 րական արտայայտութիւնը Բագրատունու քերթուածներն մէջ:
 Այ՛, ուրիշ դէպքերում էլ յիշում է նա Հայաստանի անուն-
 ներ, բայց հայրենիքը հեռուից մշուշով պատած է երևում
 նրան. հայրենիքը և հայրենի յիշատակութիւնները երգի նիւթ
 չեն դառնում, այլ միայն իբրև մի արտաքին ձև օգնում են նրան,
 ճիշտ ինչպէ՞ս և յունական աստուածներն, աշխարհագրական
 տեղերի անուններն և նրանց առասպելներն ու զրոյցները:

Մի կողմ թողնելով մի քանի պատմական անձերի վրայ
 տաղերը, ինչպէ՞ս և «սթափական» բունայանդերն «ի հերիտայն»,
 «անէ՛ծք ի ճանճս», որոնց մասին խօսել չարժէ, — տեսնում ենք
 որ Բագրատունու բանաստեղծութիւնների նիւթը ամենամեծ
 մասամբ հասարակ բաներ են. նա ազգատ է եղել մտքերով
 և նրա մտքերն ու տրամադրութիւնն ընդհանրապէ՞ս
 պրոզայիկ են:

Ինչի՞ մէջ է ուրեմն քերթող Բագրատունու արժանիքը:
 Երկու բանն մէջ, նախ՝ նա բնութիւն սիրող է, դիտէ զգալ և
 նկարագրել բնութիւնը. և ապա՝ նա հասարակ ու պրոզայիկ
 նիւթերն ևս հարուստ ու ճոխ լեզուով արտայայտել գիտէ: Կա-
 րելի է ասել Բագրատունին առաջիններից է, ի հարկէ ժա-
 մանակով, մեր նոր գրականութեան մէջ, որ կարողանում է
 իսկական բնութիւն տալ, լինի այդ ընդարձակ նկարագրներով,
 թէկարճ պատկերների ու նմանութիւնների մէջ.

Երվինիւ ծաղկանց դաշտ և հովիտ

Վէտ վէտ խաղայ ծիծաղախիտ.

Նրկարակերպ բուսոց կանաջ

Հիւսկէն օթոց սըլիռի 'նդ առաջ.

Բաջեալ մարմանդք զիւրեանց զծոց

Գրգուեն զայդիս սիրեալ անկոց.

Աղբերականց պարզեալ խոխոջ

Գոչէ 'նդ ծործոր լերանց խոռոջ.

Հեզիկ ի մարգ սողոսկ ընդ դար

Հազիւ կըքեն ըզգեղ դալար:

Բացառ լերանց գեղեցկագիւր
 Ոսկեգօտիք փայլեն ի ծիր •
 Յաւերժ մայրեաց խորիստ յեթեր
 Ընդ սօսուիւն շարժին ըստուեր •
 Պարզ և յըստակ օդ քաղցրասիւզ
 Բուրեն վարդից հոտ անուշիկ:
 Մեզ Տիտոնեան հարսըն սիրած
 Պարզէ զգըլխով վրբան ներկած
 Ոսկեառտուն վարդապըսակ
 Ընդ աշալուշն և ընդ երեակ •
 Շուրջանակի յաշաց եզերք
 Հոյլ հոյլ սոկի սփռին իւր հերք:

Բերեմ մի օրինակ էլ նմանութիւններից •

Որպէս ալիք անդնդոց

Ի ծուրի երկմիտ տատանին

Ի խիտ հողմոց գուպարած,

Մինչ ուժգնագոյնն անկասկած

Ոստեալ վարէ ի Հանդրին •

Եւ կամ զօրէն Եփրատէս

Քարնանաղայր թափ առեալ

Վանեալ զըլէ ամեհի

Թումբ և կամուրջ և մայրի՝

Ըզընաւս ի մի տառ ձուլեալ . . .

Երբեմն նմանութիւնները հոմերական ձևով այնպէս ընդարձակուում են, որ ինքնուրոյն ընաւարութիւն են ստանում, և մարդ գրաւուելով նկարագրած տեսարանից՝ մոռանում է նոյն իսկ երգի բուն նիւթը: Այս ազդեցութիւն է անշուշտ իւր ընթերցանութեան ինչպէս պատմում են, Իլիականը նա բերան ասելիս է եղել: Բայց ընդհանուր առմամբ Բագրատունու աաղերի մէջ աւելի ճարտասանութիւն կայ քան բանաստեղծութիւն. աւելի սովորովի է, արուեստ ունի, քան ինքնաբոլիս ստեղծագործութիւն և զգացում. ուստի նրա նկարէն ու պերճ ոճը իւր բոլոր սեթևեթանքով հանգերձ՝ միակերպ է, ձանձրալի է իւր զիմումներով, պարաւոր նուագներով և ինչ նա ոչ միայն իշխան է լեզուի, այլ և ոտանաւորի. միանման յաջողութեամբ նրա դրչի տակից գուրս են դալիս և կարճ, սրընթաց տողեր, և դանդաղ, ծանր ու մեծավայելուչ ասացուածներ երկար տողերով: Հեշտաւոր հնչիւններն ու վանկերը, երաժշտական շեշտերն ու յանգերը երբեմն յափշտակում են ընթերցողին: Բայց աւանդ, այդ ամենն ապարդիւն են

անցնում, որովհետև տաղերն արտաքին գեղեցիկութեան չունին ներքին հարստութիւն, և մարդ յոգնում, նայն իսկ ուժասպառ է լինում, երբ կարգում է մի շնչին միտք անլերջ երկարութեամբ զարգացրած, մասնաւանդ երբ յաճախ այդ շնչին միտքն ևս բառերի և խօսքերի հեղեղի մէջ կտրչում է: Մարդ զգում է շարունակ, որ մի անամէջ քերթողութեան հետ գործ ունի իսկ այդ բաւական է ամենայն բանաստեղծութիւն մեռցնելու համար:

Եւ այս ամենն առաջանում է նրանից, որ Բագրատունին քնարական բանաստեղծ չէ, քնարական ոչինչ չունի, բայց և այնպէս նա իւր գեղեցիկ հասակը կորցնում է քնարերգութիւն անելով: Նա «գիւլցազանց մարգարէ» է, ինչպէս ինքն իրեն անուանում է մի տեղ. ծնուած է վիպական բանաստեղծ և առանձնապէս զիւլցազանցերգու լինելու: Եւ 1830 թուից յետոյ նա այդ զգում է և ինքն իրեն նուիրում է միայն իւր «Հայկ զիւլցազնին», դադարելով այլ ևս քնարական քերթուածներ յօրինելուց, և եթէ դարձեալ գրում է բաւականաչափ մեծ ու փոքր քերթուածներ, դրանք, այսպէս ասած, ի պաշտօնէ շինուած բաներ են, գրեթէ բոլորըն ուխրուած Տիւղեան ընտանիքին:

Բագրատունու բանաստեղծութեան զարգացումը ի հարկէ «Հայկ զիւլցազնի» մէջ է. բայց ես այդ քերթուածն իւր ժամանակին առանձին կառնեմ. որովհետև դա ծնունդ է մեր 19-րդ դարու բանաստեղծութեան ոչ թէ առաջին, այլ երկրորդ երեսնամեակի:

Մ. Արեղեան

